

E. SCHÜTZ, *An armeno-kipchak chronicle on the Polish—turkish wars in 1620—1621.*

Է. ՇՅՈՒՑ, Հայ-ղբջաղ մի տարեգրություն՝ 1620—1621 թվականների լեհ-թուրքական պատերազմի մասին, Բուդապեշտ, 1968:

Գրախոսվող այս աշխատությունը, որ հրատարակել է հունգարական ակադեմիան՝ «Հունգարական արևելյան գրադարանի» մատենաշարով, բաղկացած է հիմնականում երկու մասից՝ ուսումնասիրություն և բնագրեր:

Գրքի առաջաբանում հեղինակը նախ անդրադարձել է հայ գաղթականության առաջացման շարաբաստիկ պատմությանը և նշել, թե ինչպես օտարերկրյա նվաճողների (սելջուկների և մոնղոլների) վայրագությունների հետևանքով բազմահազար հայեր հարկադրված են լինում թողնել իրենց հայրենի օջախը և ապաստան փնտրել օտար երկրներում: Հայկական գաղթօջախներ են ստեղծվում Ղրիմում, Պարսկաստանում, Ուկրաինայում, Ռումինիայում, Լեհաստանում, իսկ հետագայում նաև Հնդկաստանում, Ռուսաստանում և բազմաթիվ այլ երկրներում:

Հայ գաղթականներն իրենց ապաստանած երկրներում բնակություն են հաստատում ո՛չ թե ցրված, այլ հավաքական ձևով, առանձնացված թաղամասում: Նրանք իրենց բնակություն հաստատած վայրերում ստեղծում են մշակութային օրինակելի օջախներ և խոշոր դեր կատարում հայ մշակույթի զարգացման գործում՝ նպաստավոր հող ստեղծելով միաժամանակ հայկական և տեղական մշակույթների մերձեցման համար:

Լեհաստանի իրականության մեջ XV—XVII դարերում հայ մշակույթի կարևոր օջախներից են հանդիսացել Լվովը (որը հայ մատենագրության մեջ հիշվում է նաև Իլով, Լիմբերգ, Լեոպոլիս անուններով) և Կամենեց-Պոդոլսկը: Ուսումնասիրության հեղինակը իրավացիորեն գրոնում է, որ այս երկու քաղաքները հանդիսացել են ո՛չ միայն Արևելքն Արևմուտքին կապող տարանցիկ առևտրի կարևոր կենտրոններ, այլև՝ իր ժամանակի հայ մշակույթի խոշոր օջախներ (էջ 9):

XIV դարից սկսած մինչև XVIII դարը, այսինքն՝ մինչև լեհահայերի վերջնական ձուլումը, Լվովում և Կամենեցում գրվել են պատմական և գրական մեծարժեք մի շարք աշխատություններ, ընդօրինակվել են հայկական հարյուրավոր ձեռագրեր:

Լեհաստանում գրված պատմական կարևոր արժեք ներկայացնող աշխատություններից է «Կամենեցի տարեգիրքը», որը սկզբնաղբյուր է հանդիսացել պրոֆ. էդմոնդ Շյուցի ներկա աշխատության:

«Կամենեցի տարեգրությունը» մեզ է հասել երկու ընդօրինակությամբ, որոնցից մեկի ձեռագիրը (թերի վիճակում) գտնվում է Փարիզի ազգային գրադարանում Bibliothèque Nationale, Arm. № 194, fos 48a—59b): Այս ընդգիրը պարունակում է «Տարեգրության» միայն 1605—1613 թվականների իրադարձությունները: Ինչ վերաբերում է մյուս ընդօրինակությանը, որը պարունակում է «Տարեգրության» ամբողջական ընդգիրը, այժմ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի սեփականությունն է և գրանցված է № 1700-ի տակ:

«Կամենեցի տարեգրքի» մի մասը հայերեն առաջին անգամ հրատարակել է Ղ. Ալիշանը «Բազմավեպ» ամսագրի 1895—1896 թվականների համարներում, իսկ հետո լույս են թայել «Տարեգրության» ամբողջական ընդգիրը, ներառյալ հայերեն տառերով գրված զբաղեցրած: Այդ նույն հատորում նա զետեղել է նաև Լեհաստանի հայ գաղթավայրի մասին տարբեր աղբյուրներում եղած պատմական արժեքավոր տեղեկություններ (մանր ժամանակագրություններից, կաթողիկոսական կոնդակներից, հիշատակարաններից, հիշատակագրություններից և այլն): Հատորը հրատարակվել է Վենետիկում 1896 թ., Գրիգոր Պրյորյանի նյութական օժանդակությամբ՝ «Կամենեց: Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ հալասուչեայ յաւելուածով» ընդհանուր վերնագրի տակ: Ավելի նոր ժամանակում «Տարեգրության» Փարիզի ձեռագրի զբաղական հատվածը, որը պարունակում է 1605—1613 թթ. իրադարձությունները, հրատարակել է Jean Deny-ին 1957 թ. («L'armenocoman et les „Ephémérides“ de Kamteniece (1604—1613)», Weisbaden, 1957):

«Տարեգրության» հայատառ զբաղեցրածը Ալիշանը հրատարակել է անհաջող վերծանությամբ, որովհետև ծանոթ չի եղել զբաղական լեզվին և հրատարակած զբաղական ընդգիրը թողել է առանց թարգմանության՝ հատորի առաջաբանում տալով հետևյալ ծանոթագրությունը այդ մասին՝ «Լեզուին օտարութեանն և հասարակաց անհասկանալի ըլլալուն պատճառաւ՝ ցաւելով ռուսիպոլիմք թողուլ ի հրատարակութենէ՝ վերջին մասը, թաթարերէնը, որ և մեծագոյն մասն է, 86 երես գրոցն, մինչ հայերէնն՝ 74 միայն է, ժամանակին թողլով՝ ուրիշ խորհուրդ կամ հրնարք մի տալու. միայն՝ թերևս քանի մի դի-

բիճաց չիշատակ՝ կամ բառ գրուածին կամ թարգմանութեն և բազմազմ՝ առեւած: Բառ տա-
րեթուա. ստորան-ասու: Բ սկզբանն, որ իճա-
ցութ լեզուին կամ գրագին ասորբութիւնն»
(էջ 3-4):

«Վամենեցի տարեգրութեան» սրճագրերն չվեր
տանձած ա՛ռ ալս մասն է, որն առաջին ան-
գամ մեծ բծախնդրութեամբ վերծանել և անդ-
ւերին է թարգմանել զբնագրակա պրոֆ. Շյուցը:
Նա իր աշխատութեան մի էջի վրա ազել է զբն-
ագրական բնագրեր լատինական տառագարձու-
թեամբ իսկ գիճացիներ վրա՝ ալզ նույն բնագրի
անգլերեն թարգմանութիւնը, սա սրում, պրոֆ.
Շյուս կարգադրել է Վենետիկից ստանալ տա-
րեգրութեան միկրոֆիլմը և որոշ սրբագրութիւն-

1620 թ. (1620) լուծար Ա (1): Այնա-
գուն. Քուրբ բառաշարնաւ շափուլար էլիբ
Տեղգիլար Վամենեցու Վարչովա. ալալմ
՛Խաղար տաւուտաւ սա սլաւ էլիլար իսայ-
սի Ա. սաւաւսաւ ազր՝ պիւրիսիս Հան Անթոն.
պիւրիսիսիկ Մըրիսիս. սա սլաւան աւամ
ալիբ Վարչուրա պարաւեր: Տա պու շափուլ-
լարնա մլնն Աղսնեղնի Տէր Գրիգոր Օղլուն
բաւա: էլիլար իսայաւան. բրբրաղալիլի-
լա. սա սլամանեւա. Բն Բորսիկա բրբովա-
սիկ էլլա մլնն Անթոնիսն նկաւ Բն էլիլի Վար-
չովա Ա. իլ շափուլար ալալմ ՛Խաղար էլ-
լիլար՝ սա Բորսիկա էլիլիլարերն ստաղ էլ-
լիլար: իսայսն Բի սլ շափուլարներ դեզ սա ալը-
սա սաւ սաւաւալիլի էլիլի՝ ետկա իստալար:
Ա ՛Խաղար էլիլարին ստրաւալիլի էլլալիլն սա
սալալաղ էլիլար մլնտիլարին Վարչովա աւ-
աւան 20 մի երաւ. պիւր շանարկա սա ան-
սա գատրմանըլ աւաւալար. Բոր գաման
Վարչա զիլլաւա:

Այս շնով, պատմական կոնկրետ տվյալներով
շարադրված է որչ տարեգրությունը Այստեղ
հայատառ զբնագրերն բերված է Ալիշանի հրա-
տարակությունից՝ պրոֆ. Շյուցի ուղղումներով,
իսկ հայերեն թարգմանությունը կատարված է
պրոֆ. Շյուցի անդերեն թարգմանությունից:

Ուսումնասիրության մասում հեղինակն առան-
ձին գլխում քննության է ենթարկել «Տարե-
գրութեան» հեղինակների հարցը և, հետևելով
Ալիշանին, հանդել այն հետևության, որ «Տարե-
գրութեան» առաջին մասի՝ հին շրջանի, այսինքն՝
XV դարի կեսերից մինչև 1610 թ. «Տարեգրու-
թեան» բաժնի հեղինակն է հանդիսացել Վամե-
նեցի ազնուները շովհաններ, որը երկար տա-
րիներ բահանա է եղել Վամենեցի հայ համայն-
քում: Երա մահվանից հետո տարեգրությունը
շարունակել է նրա որդին՝ Գրիգոր ազնուները՝
հասցնելով մինչև 1611 թ.: Վերջինիս մահվանից

ներ կատարել Ալիշանի հրատարակած բնագրում:

Պրոֆ. Շյուցը իր այդ աշխատության մեջ վեր-
ծանել և թարգմանել է զբնագրական աշ աճրողը
բնագիրը, այլ միայն այն մասերը, որոնք վե-
րաբերում են 1620—1621 թթ. իրադարձություն-
ներին, այսինքն՝ Խոտինի պատերազմին: Նա
հրատարակել է Ալիշանի լույս բնծայած բնա-
գրի 84—89 և 93—109 էջերը, որը համապա-
տասխանում է Վենետիկի ձեռագրի 107—115 և
122—157 էջերին:

«Տարեգրութեան» բնույթը ցույց տալու նպա-
տակով ավելորդ չենք համարում ստորև բերել
միայն մի հատված հայատառ զբնագրերն բնա-
գրից և տալ նրա հայերեն թարգմանությունը:

«1620 թվական, հունվարի մեկ, ուրբար-
Թուրքական սուլթանից էլիլներ եկան Կա-
մենե և գնացին Վարչովա: Պատգամավորներ
եկան նաև քաղաքական խանից, որոնցից մեկի
անունը ջան Անտոն էր, իսկ մյուսներ՝ Մըր-
իսիլի: Նրանց ողեկցում էին ուրսուն հոգի:
Նվ ինձ՝ Տեր-Գրիգորի որդի Օխենտիս, բերդը
երամանտարի կողմից էանձեւաւաւեղ ուղեկ-
ցել նրանց իբրև հսկիչ և բարգմանիչ՝ այս
աւաղաւաւորութեանը տանելու բաղաւորի
մոտ: Ժամանելով Վարչովա, այս երկու պատ-
գամավորությունը ներկայացրին իրենց ֆեր-
մանները: Նվ քաղաքական պատգամավորու-
թեանը շտապ աւաւակեցին և նանապարհ դրին.
իսկ սուլթանի պատգամավորութեանը շրողե-
ցին մնալու. այլ ուղարկեցին Վարչովայից
հասն մղոն հետավորութեան վրա գտնվող մի
հաղաւ և այնտեղ նրանց դեկցին բաստ եր-
նաւ ժամանակով»:

Հետո տարեգրությունը հայատառ զբնագրերնով
շարունակել են Գրիգորի երկու որդիները՝ տեր
Օղսենտը և տեր Հակոբը, որոնք տարեգրությու-
նը հասցրել են մինչև 1624 թ.: Այդ թվականից
հետո տարեգրությունը մնացել է չգրված մինչև
1649 թ., որից հետո անձանոթ մեկը գրել է ևս
չորս տարվա (1649—1652 թթ.) տարեգրությունը:

Ցանկանալով ցույց տալ Խոտինի պատերազ-
մի մասին հայկական «Տարեգրութեան» տեղե-
կությունների հավաստիությունը, պրոֆ. Շյուցը
այն համեմատության մեջ է դնում լեհական և
թուրքական սկզբնաղբյուրների հետ և գալիս է
այն հետևության, որ թուրքական և լեհական
աղբյուրները, որպես տեղեկացիող մարդկանց
կողմից գրված աղբյուրներ, տառապում են միա-
կողմանիությամբ և այնքան էլ ճիշտ չեն ներ-
կայացնում առանձին ճակատամարտեր, ինչպես
նաև կողակների ունեցած մասնակցությունն այդ

պատերազմում, Բ. Կ. Հայկական «Տարեգրություններ», որպես շեղոր կողմի սկզբնաղբյուր, ավելի անկողմնակալ է և հավաստի: Քացի այդ, հայկական «Տարեգրություններ» պարունակում է այնպիսի մանրամասնություններ, որոնք բացակայում են մյուս աղբյուրներում:

Կամեննցի «Տարեգրության» հոտինի պատերազմի մասին վերաբերող բաժնի հեղինակը, ինչպես ցույց է տալիս պրոֆ. Շյուցը, հանգիսացել է Օգսենտը, որը մասնակցել է հոտինի պատերազմին և իր տեղեկությունները հաղորդում է որպես ականատես: Այդ որոշակի երևում է իր իսկ Օգսենտի հաղորդած հետևյալ տեղեկությունից. «Այս է ճշմարիտը (այսինքն՝ իր դրած տեղեկությունները — Ա. Ա.) և չկա փոքր-ինչ մի բան, որ այլ կերպ եղած լինի, որովհետև ես Օգսենտ, որդի տեր Գրիգոր ավագ քահանայի, որը դրել է այս տարեգրությունը, լավատեղյակ է: Ապանշում է, որ այն բոլոր գեպերում, երբ ինքն անձամբ ականատես չի եղել իր նկարագրած այս կամ այն իրադարձությանը, դրի է առել ականատես անձնավորություններից. «Ես հավաստի տեղեկություններ եմ վերցրել ականատես անձնավորությունից և գրանք հարազատորեն գրի առել ներկա «Տարեգրության» մեջ» — գրում է նա (Schutz, էջ 83):

Դյուրին չի եղել զրաղերեն բնագրի անդերևն թարգմանության գործը: Պետք է նկատի ունենալ, որ «Տարեգրության» զրաղական բնագրում թիչ չեն նաև հայերեն (օրինակ՝ «շամիչ», «կես», «Գիտ խալի», «Սուրբ», «Տէր» և այլն), լեհերեն (օրինակ՝ albo, balas, menzje, odprahva, trup, vojti, poprli և այլն), ուկրաիներեն (օրինակ՝ буivol, боярин, дуб, хородиче, hraunna, оборога և այլն) բառեր, զրաղերեն առաջին անգամ հանդիպող բառեր և այլն: Հեղինակը մեծապույն բարեխղճությամբ և ճիշտ է թարգմանել նշված լեզուներով եղած բոլոր բառերը:

Պրոֆ. Շյուցի սովյալ աշխատության արժեքը չի սահմանափակվում միայն հոտինի պատերազմի պատմության մասին հայկական տարեգրության վերծանությամբ և թարգմանությամբ: Նա մեծ աշխատանք է կատարել նաև զրաղերենի ուսումնասիրության ուղղությամբ:

Ղրաղերենը, ինչպես հայտնի է, ժամանակակից կարաիմական, կուժանական (հնագույն պոլովցիներին) և մի բանի այլ լեզուների հետ կազմում է թուրքական լեզվի զրաղ-կարաիմական խումբը: Ղրաղերենը, ցեղա-տոհմային զաչնակցությամբ, Արևելքում հանդես են եկել Միջին Ասիայի հարթավայրերում շատ վաղուց, իսկ XI դարում նրանք երևում են նաև մերձսևծովյան շրջաններում, իրենց մեջ ձուլելով օգուղական և պեչենեղական ցեղերը: Այնուհետև նրանք երի-

վում են Ղրիմի թերակղզում: Հայկական մի աղբյուրում, որը նվիրված է Կաֆայի պատմությանը, հետևյալ տեղեկություն է հաղորդում զրաղների Ղրիմում հաստատվելու մասին. «Ես յետ ժամանակաց Ն'լև (1042) ամին, ել ի Պարսկական զնդլն զրաղ կուցեցալ ազգ մի՝ այլայեզու՝ մահմետական կրօնիք, զայ տիրէ զրուր Ղրիմն» (տե՛ս Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 336): Ղրիմում գարեր շարունակ հայ բնակչությունը կողք-կողքի ապրելով զրաղների հետ, յուրացրել է նրանց լեզուն: Հետագայում, երբ Ղրիմը 1475 թ. ընկավ թուրքական տիրապետության տակ և կյանքն այնտեղ անտանելի դարձավ, հայ զաղթականությունը փոխադրվեց եվրոպական երկրները, այդ թվում՝ նաև Լեհաստան, որտեղ հայ զաղթականությունը շարունակեց գործածել զրաղական լեզուն և զրաղական լեզվով բավական հարուստ մատենագրություն ստեղծեց: Հայտնի է, որ լեհահայերի դատավարության գործերի մեծ մասը (տասնյակ հատորներ) գրված են զրաղերեն:

Արար ճանապարհորդները հետո հետաքրքրվել են զրաղական լեզվով և նրա բառապաշարին տեղ հատկացրել իրենց բառարաններում: Սակայն XVI դարից սկսած զրաղական լեզվի վազգիտության համար մեծ արժեք են ներկայացնում:

Հայատառ զրաղերենի ուսումնասիրության պիոներներն են հանդիսացել, ինչպես ցույց է տվել հետհետև, պրոֆ. Քուչուկ-Չովհաննիսյանը և Փ. Ս. Կորչը անցյալ դարի վերջերին, սակայն նրանց ուսումնասիրությունները չեն հրատարակված: Հայատառ զրաղերեն առաջին բնագիրը հրատարակել են Կրայնից-Գրայֆենհորստը և Յ. Քոնիբերը 1912—1913 թթ.: Մեզ մոտիկ ժամանակներում՝ 1957 թ. Jean Deny-ն հրատարակեց Փարիզի Ազգային մատենագրանի հայկական ձեռագրից հայատառ զրաղերեն մի փոքրիկ բնագիր, որի մասին խոսք ևղավ վերևում: Ռուսական արևելագիտական զպրոցի զխնականներինց հայ-զրաղ բնագրերի ուսումնասիրությամբ և բնագրերի հրատարակությամբ զրաղվել է Հրունին, որի առաջին ուսումնասիրությունը լույս է տեսել 1953 թ.: Ս. Տրայարսկին ռուսերը և հրատարակել հայ-զրաղերեն բառարանը: Հայ-զրաղերեն բնագրերի լուրջ ուսումնասիրությամբ սկսել է զրաղվել զրախոսվող աշխատության հեղինակ պրոֆ. Շյուցը: Նրա առաջին ուսումնասիրությունը լույս է տեսել 1962 թ.:

Ներկա աշխատության մեջ պրոֆ. Շյուցը կատարել է շնորհակալ մի այլ աշխատանք և ո. զրթի վերջում նա զետեղել է զրաղերենի թերակառությունը (էջ 93—118) և բառացանկը (էջ 121—

186), ... շատ ուշադրությամբ է լինել զրշագերեն լեզուն ուսումնասիրողների և արխիվներում պահպանվող հազարավոր հայատառ զրշագերեն լեզուների վերանայության ու հրատարակության համար:

Աշխատության հավելվածում պրոֆ. Շյուցը գեղեցիկ է աշխատության բիրտգրաֆիան (էջ 157—160), մի հատված Սիմեոն գրչի օրագրությունից «Սուլթան Կոստանի արշավանքն բնդեմ Անապատների վերնագրի տակ (էջ 163—165) և Վենետիկի Մխիթարյանների «Կամենեցի տարեգրքը» պարունակող ձեռագրի եռտիկի պատերազմի պատմության էջերի յուսանկարները (էջ 172—215):

Պրոֆ. Շյուցի ազլայ աշխատությունը դիտական մեծ արժեք ունի ինչպես պատմության, այնպես և լեզվագիտության համար: Հունգարիա-

ի գիտությունների ակադեմիան շնորհակալ նախաձեռնություն է ցուցաբերել՝ հրատարակելով մեծարժեք այս աշխատությունը:

Վերջում, զրշագերենի ուսումնասիրության գործին նպաստելու ցանկությամբ, ավելորդ չենք համարում զրշագերենների ուշադրությունը ներկայացնել այն փաստի վրա, որ Մաշտոցի անվան մատենադարանի № 2267 ձեռագիրը պարունակում է հայ-զրշագերեն բառարան, ինչպես և զրշագերենի մի բնագիր՝ հայերեն թարգմանությամբ, որը, որքան մեղ հայտնի է, զրշագերենի նազույն բնագրերից է (բնագրին հավան է 1598 թ. Լուսիկ գրչի կողմից) և, կարծում ենք, օդտակար կարող է լինել հետադադում զրշագերենի ուսումնասիրության գործում:

Պրոֆ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ. Մխիթարեան մատենադարանի մեռագրաց, Ա. Վենետիկ, 1966:

Հայ միջնադարյան հուշարձաններին, մասնավորապես Հարտարապետությանն ու մանրանկարչությանը նվիրված գրականության հրատարակումը այսօր ոչ միայն մեր, այլև ուրիշ շատ երկրներում մեծ հետաքրքրություն է առաջացրել: Գրա վկայությունը թեպետև ու Հարվարդում, Փարիզում ու Լոնդոնում, Մոսկվայում, Լեհիկոնդրոսում, Հոտմում և աշխարհի տարրեր քաղաքներում յույս տեսնող այրումներն են և անվանի գրականների ուսումնասիրությունները: Հիբադի. զեռ նոր էինք ծանոթացել Վենետիկից ստացված այրումին, երբ արագությամբ երևաց ու ուղտուկից «Հայաստան» հրատարակչության յույս բեծայած «Հայկական մանրանկարչությունը»:

Այրամն սովորաբար է Վենետիկի մատենագրանի 13 ձեռագիր, բովանդակում 84 պատկերատախտակ՝ 121 նկարով: Ընդարձակ ներածությունը գրել է հայ մշակույթի վաստակաշատ գործիչ Ն. Մ. մանաշյանը: Ի մի բերելով տարիների իր հետազոտությունների ու պրպատումների արդյունքը, նա այրումի բնագրի ներածականում բնության առարկա է դարձրել ոչ միայն Վենետիկի հայկական ձեռագիր-հուշարձանները, այլև հայ մանրանկարչության պատմության ոչ գյուրին խեղիքը՝ բնդհանուր առմամբ:

Հայ մանրանկարչության ծագումը նա իրավացիորեն կապում է գրերի գյուտի ու գրչության արվեստի դարգացման հետ («Մագումն ու նկարագիրը հայկական մանրանկարչության»)։

միշտ է, հայ մանրանկարչության մեղ հայտնի հնագույն արիւնակները IX—X դարերից այն կողմը չեն անցնում, սակայն արվեստի պատմության անխոնջ հետազոտողների պրպատումների շնորհիվ ի հայտ են բերվում նորանոր հետաքրքրական փաստեր, որոնք հավաստում են հայկական մանրանկարչության գոյությունը նաև IX դարից առաջ՝ բնդհույ մինչև V—VI դարերը: Այս առումով եթե անտեսենք նույնիսկ «Էջմիածնի» ավետարանի վերջում փակցված VI—VII դարերին վերագրվող մանրանկարները (իսկ Մ. մանաշյանը, զծրախտարար, անտեսում է գրանք), ապա մյուս կողմները՝ V—VII դարերի արմնանկարչության մնացորդները ներդրում, Քալիշում, Արուշում, Լմբատում, ինչպես նաև մատենագրական վկայությունները բավական ծանրակշիռ են և իրավունք են տալիս ասելու, որ Հայաստանում զեղանկարչությունը (նաև մանրանկարչությունը) յայն հանաչում է ստացել այդ դարերում: Հատկապես հետաքրքրական են Վրթանես Քերթոզի «Յաղագս պատկերամարտաց» ճառի և Մովսես Կաղանկատալացու վկայության Մ. մանաշյանի տված յուրովի մեկնարանությունները: Գրանք, բստ էության, որոշակի ներդրում պետք է համարել հայ զեղանկարչության պատմության ուսումնասիրման բնագավառում:

Հաշորդ բաժինը վերնագրված է «Ընդհանուր տեսություն հայկական մանրանկարչության զանազան կենտրոնների վրա»: Ինչպես պետք է են-